ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Մելիք Արտաշեսի Մելիքյանը ծնվել է 1994 թվականի նոյեմբերի 8-ին:

2012 թվականին ընդունվել և 2019 թվականին ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2019 թվականին ընդունվել և 2021 թվականին ավարտել է նույն ֆակուլտետի մագիստրատուրան:

2012 թվականի սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին աշխատել է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ֆինանսատնտեսական և վարչական բաժնում՝ որպես իրավաբանի օգնական:

2012 թվականի դեկտեմբերից 2014 թվականի դեկտեմբեր ամիսներին անցել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության և ստացել սերժանտի կոչում:

2017 թվականի փետրվարից հուլիս ամիսներին աշխատել է «Յուքոմ» ՍՊԸ-ում նախ որպես վաճառքի և սպասարկման, ապա՝ իրավական պարտավորությունների ապահովման մասնագետ:

2017 թվականի սեպտեմբերից 2018 թվականի հոկտեմբեր ամիսներին աշխատել է որպես դատավորի գործավար՝ նախ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության, ապա Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության, այնուհետև՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարաններում:

2019 թվականի մայիսից սեպտեմբեր ամիսներին աշխատել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղարի պաշտոնակատար:

2019 թվականի սեպտեմբերից հոկտեմբեր ամիսներին աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ որպես աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության առաջին կարգի մասնագետի պաշտոնակատարի, ապա նույն թվականի հոկտեմբերից մինչև 2020 թվականի հունիսը՝ նույն ծառայության առաջատար մասնագետի պաշտոնակատարի, իսկ նույն թվականի հունիսից մինչ 2021 թվականի նոյեմբերը՝ նույն ծառայության գլխավոր մասնագետի պաշտոնակատարի պաշտոններում:

2021 թվականի նոյեմբերից մինչ 2022 թվականի մարտ ամիսներին աշխատել է դատավորի օգնականի պաշտոնում:

2022 թվականի մարտ ամսից մինչ օրս աշխատում է ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ որպես աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

2021 թվականին հրամանագրվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում՝ որպես հայցորդ:

2025 թվականի փետրվարի 19-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի՝

նույն թվականի մայիսի 19-ի որոշմամբ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի (ԺԲ.00.05 թվանիշով) գիտական աստիճան:

ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ.

1. «Ինքնիրավչության հանցակազմին առնչվող որոշ տեսական և գործնական խնդիրներ», Դատական իշխանություն, սեպտեմբեր- հոկտեմբեր, 2018, 9 - 10 (231-232), 76-82 էջերը:
2. «Փորձաքննությունների նշանակման և կատարման հետ կապված որոշ հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում», Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր, 2019, 11-12 (245-246) 82-93 էջերը:
3. «Ապօրինի ձեռնարկատիրության հանցատեսակի զարգացման միտումները և պատժի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում», Օրինականություն, № 116, 2020, 9-15 էջերը:
4. «Փողերի լվացում հանցագործության սուբյեկտիվ առանձնահատկությունները», Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր, 2020, 11-12 (257-258), 74-83 էջերը:
5. «Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հանցատեսակը ՀՀ քրեական օրենսգրքում», Դատական իշխանություն, ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 2020 3-4 (249-250), 49-61 էջերը:
6. «Նախորդող հանցագործությունը որպես փողերի լվացման համար քրեական պատասխանատվության նախապայման», Դատական իշխանություն, մարտ-ապրիլ, 2021, 3-4 (261-262), 141-148 էջերը:
7. «Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական առանձնահատկությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում», Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր, 2022, 7-9 (277-279), 54-61 էջերը:
8. «Կաշառքի պրովոկացիայի հիմնախնդիրները հանցագործության պրովոկացիայի առանձնահատկությունների լույսի ներքո», Օրենքի պատվար, N 16, 2023, 102-111 էջերը:
9. «Հանցագործության պրովոկացիայի և հանցակցության հարաբերակցության հիմնահարցերը», Պետություն և իրավունք, Եր., 2023, N 2 (96), 236-241 էջերը:

10. «Հանցագործության պրովոկացիայի օբյեկտիվ հատկանիշները», Դատական իշխանություն, ապրիլ-սեպտեմբեր 2023 4-9 (286-291), 69-75 էջերը:

11. «Субъективные характеристики провокации преступления»,Регион и мир, 2023, № 4, 19-21 էջերը:

12. «Հանցագործության պրովոկացիայի բնորոշումը քրեական իրավունքում» Օրենքի պատվար, N 15, 2023, 88-100 էջերը:

13. «Հանցագործության պրովոկացիայի դրսևորումներն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի շրջանակներում», Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան Տեղեկագիր, 3 (111), 2023, 213-224 էջերը:

14. «Current developments of legal regulations on crime provocation in RA Criminal code», Պետություն և իրավունք, Եր., 2024, N 1 (98), 100-109 էջերը:

15. «Հանցագործության պրովոկացիայի տեղն ու նշանակությունը քրեական իրավունքի ընդհանուր մասի որոշ ինստիտուցիոնալ կառուցակարգերում», Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024, 7-9 (301-303), 33-48 էջերը:

16. «Հանցագործության պրովոկացիայի դրսևորումները քրեական պատասխանատվությունը բացառող մի շարք հանգամանքներում», Դատական իշխանություն, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2025, 10-12 (316-318), 125-133 էջերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում», իրավ.գիտ.թեկն., 19. 02.2025թ.

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) հետ համագործակցության շրջանակներում՝

1. «Տուժողի կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» և «Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման գործնական հմտություններ» թեմաներով երկօրյա վերապատրաստումներ- 6-7 մարտի 2020 թվական:

2. Վեբինար՝ նվիրված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի վերաբերյալ կոնկրետ ասպեկտներին- 16 և 17 մարտի 2021 թվական:

3. Սեմինար՝ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների ներպետական մակարդակով կիրառման հատուկ ասպեկտների վերաբերյալ-2 հուլիսի 2021 թվական:

4. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի ներկայացուցչի և տարբեր պետական մարմինների միջև փոխգործակցության հայեցակարգի նախագիծ» - կլոր սեղան-քննարկում -24 սեպտեմբերի 2021 թվական:

5. «Քրեական արդարադատության բարեփոխումների աջակցություն և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցում Հայաստանում»-1 և 2 հոկտեմբերի 2021 թվական:

6. «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» Կլոր սեղան-քննարկում՝ նվիրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի առկա հարցերին- 11 և 18 նոյեմբերի 2021 թվական:

7. Վճռաբեկ դատարանի դատավորների օգնականների և փորձագետների համար կազմակերպված աշխատաժողով -28 ապրիլի 2022 թվական:

8. «Թրեյնինգ թրեյնինգավարների համար»՝ ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ, նոր Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերի ընտրված հարցերի շեշտադրմամբ»- 17-19 հունիսի 2022 թվական :

9. ՀՀ Վճռաբեկ դատարանի հետ համատեղ աշխատաժողով- 6 հոկտեմբերի 2022 թվական:

10. Քրեական գործերի վերաբացման հիմնահարցերին նվիրված քննարկում-27 հուլիսի 2023 թվական:

11. Մասնագիտական քննարկում-7 դեկտեմբերի 2023 թվական:

12. Երկօրյա աշխատաժողով-12-ին և 13-ի դեկտեմբերի 2023 թվական:

13. Գործերի վերաբացման վերաբերյալ սեմինար՝ ներպետական մակարդակով-2024 թվականի 24 և 25 հունվարի 2024 թվական:

14. Աշխատաժողով՝ ՄԻԵԴ վճիռների կատարման հիմնական զարգացումների վերաբերյալ 26-27 մայիսի 2025 թվական:

15. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարման շարունակական աջակցություն Հայաստանում» ծրագրի շրջանակներում տեղեկատվական/իրազեկման այց Ստրասբուրգ՝ Եվրոպայի խորհրդի գրասենյակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան- 18-19 նոյեմբերի 2025 թվական:

16. Աշխատաժողով ՀՀ Վճռաբեկ դատարանի համար 24 նոյեմբերի 2025 թվական:

17. «Ողջամիտ ժամկետներ և դատական իշխանության դերը, ինչպես նաև հանձնման գործընթացը»- 18 մարտի 2026 թվական:

«IRZ» միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի հետ համագործացության շրջանակներում՝

1. Վերապատրաստման դասընթաց-16 հուլիսի 2021 թվական:

2. Սեմինար-ՀՀ Վճռաբեկ դատարանի հետ համագործակցության շրջանակում հետևյալ թեմաներով «Քրեական հետապնդման հասկացությունը ՄԻԵԿ-ի համատեքստում», «Բարեկամական կարգավորումը կամ միակողմանի

հայտարարությունը որպեսվարույթի վերանայման նոր հնարավորություններ» 17 – 18 դեկտեմբերի 2021 թվական:

ՊԱՐԳԵՎՆԵՐ

Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից արժանացել է շնորհակալագրի՝ մասնագիտական պարտականությունների բարեխիղճ և արդյունավետ կատարման համար:

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Գրախոսել է մի շարք մագիստրոսական թեզեր, որպես բանախոս մասնակցել Եվրոպայի խորհրդի Երևանի գրասենյակի կողմից կազմակերպված գիտական միջոցառումներին, ինչպես նաև դասախոսություններով, հետազոտություններով և զեկույցներով հանդես եկել Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում: